ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 03/18

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ԵՎ ԱՅԼ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽՆԱԿԱՆ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՍՏԵՂԾՎԱԾ ԳԻՏՈՒԹՅԱՆ, ԿՐԹՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՄՇՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Բյուրեղավան 08 հոկտեմբերի 2018թ.

2018թվականի հոկտեմբերի 08-ին, ժամը 17:00-ին Բյուրեղավան համայնքի Բյուրեղավան բնակավայրում՝ Բյուրեղավանի համայնքապետարանի թիվ 1 վարչական շենքում, տեղի ունեցավ համայնքի ավագանու որոշումների նախագծերի և այլ առաջարկությունների նախնական քննարկման համար ստեղծված գիտության, կրթության, մշակույթի և երիտասարդության հարցերի մշտական գործող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստ, որին մասնակցում էին նախագահ Վահրամ Ապրեսյանը, անդամներ Սլավիկ Հարությունյանը, Գեորգի Աղաջանյանը, «Բյուրեղավանի արվեստի դպրոց» ԱՈՒՀ ՀՈԱԿ-ի տնօրեն Նարինե Զաքարյանը, փոխտնօրեն Սիլվա Մուկոյանը, Հանձնաժողովի աշխատանքներին աջակցող համայնքապետարանի աշխատակազմի առաջին կարգի մասնագետ Զարուհի Ապրեսյանը:

Նիստը վարում էր Հանձնաժողովի նախագահ Վահրամ Ապրեսյանը:

Օրակարգում՝

1.«Բյուրեղավանի արվեստի դպրոց» արտադպրոցական ուսումնական հաստատություն համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը Շառլ Ազնավուրի անվամբ անվանակոչելու մասին,

2.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 14-ի N 13-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

Օրակարգի 1-ին հարցի շուրջ Սիլվա Մուկոյանը ներկայացրեց, որ համայնքի ղեկավարի առաջարկությամբ որոշվել է «Բյուրեղավանի արվեստի դպրոց» ԱՈՒՀ ՀՈԱԿ-ը անվանակոչել ֆրանսիահայ նշանավոր երգիչ, երգահան Շառլ Ազնավուրի անվամբ՝ «Բյուրեղավանի Շառլ Ազնավուրի անվան արվեստի դպրոց» արտադպրոցական ուսումնական հաստատություն համայնքային ոչ առևտրային կազմակերպություն: Նրա խոսքով՝ Շառլ Ազնավուրն այն եզակի հայերից է, որ մեծ պատիվ է դպրոցը նրա անունով անվանակոչելը: Արվեստի դպրոցն էլ իր հերթին, իր աշխատանքով վաստակել է կրելու աշխարհահռչակ հայի անունը:

Որոշվեց՝

հավանություն տալ «Բյուրեղավանի արվեստի դպրոց» արտադպրոցական ուսումնական հաստատություն համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը Շառլ Ազնավուրի անվամբ անվանակոչելու մասին որոշման նախագծին և ներկայացնել ավագանու նիստին,

Կողմ- 3 Դեմ- 0

Օրակարգի 2-ին հարցի շուրջ Նարինե Զաքարյանն ասաց, որ դպրոցում բացվել է փողային բաժին և անհրաժեշտություն է առաջացել ընդունել նոր դասատու: Հաստիքացուցակում փոփոխություն կատարելու կարիք կա:

Որոշվեց՝

հավանություն տալ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 14-ի N 13-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին որոշման նախագծին և ներկայացնել ավագանու նիստին:

Կողմ- 3 Դեմ- 0

Նիստն ավարտվեց:

Հանձնաժողովի նախագահ՝ _____ Վահրամ Ապրեսյան

_____ Սլավիկ Հարությունյան

_____ Գեորգի Աղաջանյան